№ 72 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 27 **1892** ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 27 № 72

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ պէտք է անէինք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնական տեղեկութիւններ խօլէրայի մասին. Զրի թէյասներ. Խրատներ խօլէրայի մասին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Յունաց պարլամենտի բացումը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՏԵՂԵԿԱՑՈՒՑ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայոց ծխական դպրոցի ուսուցչի վիճակը.

ԻՆՉ ՊԷՏՔ Է ԱՆԷԻՆՔ

—

Ինչպէս լսել ենք հիւանդանոցների մէջ ընդունվում են այնպիսի հիւանդներ խօլէրայով, որոնք արդէն մահամերձ հիւանդ են և արդէն ցնցումների մէջ ընկնում են փողոցում.... Ուրեմն այդ տեսակ հիւանդներ հաւանական է որ մի քանի օր է արդէն հիւանդ էին փորլուծութեամբ և չէին բժշկվում:

Պարզ բան է որ վերջին աստիճանին հասած այդ տեսակ հիւանդներ՝ շատ քիչ հաւանականութիւն ունեն առողջանալու, քանի որ հիւանդութեան սկզբից չէին բըժշկվում:

Մեր կարծիքով քաղաքում նոր կազմակերպված սանիտարական խմբերի մէջ նշանակված բժիշկները պէտք է իրանց թաղի տների մէջ նոր հիւանդացածների մասին հոգային նոյն իսկ իրանց բնակարաններում և ոչ թէ քաշ տային բոլոր հիւանդներին հիւանդանոց, այն էլ այնպիսի ժամանակ, երբ հիւանդութիւնը վերջին աստիճանի է հասել: Մի՞թէ, ճշմարիտ, սանիտարական խմբերի բժիշկները դրա համար են միայն նշանակված, որ նայեն տների բակերը և արտաքնոցները և ոչ թէ խնամք տանեն հիւանդացողների մասին:

Մեղ կասեն որ չքաւոր հիւանդներին աւելի լաւ է տանել հիւանդանոց, առողջներից նրանց առանձնացնելու նպատակով, քան թէ թողնել նրանց իրանց ողորմելի բնակարանում, որտեղ չէ կարող լինել օրինաւոր հոգացողութիւն հիւանդի մասին....

Թէօրիայով այդ, ի հարկէ, աւելի ճիշդ և նպատակայարմար կը լինէր, եթէ մեր քաղաքային հիւանդանոցը ճշմարիտ ներկայացներ այն բոլոր յարմարութիւնները և միջոցները, որոնք անհրաժեշտ են խօլէրայով հիւանդների մասին հոգալու համար: Սակայն գործնականութիւնը հակասում է, մեր կարծիքով, վերև յիշված թէօրիային:

Թիֆլիսի աղքատ ազգաբնակութիւնը դեռ չէ մոռացել 1857 թւի խօլէրայի ժամանակ հանդուցեալ բժշկապետ Ստեփան Բաստամեանցի արած ծառայութիւնները խօլէրայով հիւանդներին: Հանդուցեալ բըժիշկը վերոյիշեալ խօլէրայի ժամանակ Թիֆլիսի Հալաբարի թաղումն էր դրծում: Նա չէր քաշ տալիս հիւանդներին դէպի հիւանդանոց, այլ տնէ տուն էր մտնում, ինքն այցելում էր հիւանդներին իրանց բնակարաններում և նրանց օգնութիւն հասցնում: Երբ որ նա հիւանդի տանն էր գտնվում, նա ցցում էր մի դրօշակ նոյն տան դրան վրա, որպէս զի իմանային թէ այն բոպէին բժիշկը որտեղ է գտնվում և ինքն միջոց տայ իր օգնութեան մէջ կարիք ունեցող միւս հիւանդներին իրան անմիջապէս կանչելու....

Մենք կրկնում ենք, առանձնացնել խօլէրայով հիւանդին առողջ մարդկանցից,—շատ լաւ բան է. բայց դրա համար պէտք է ունենալ հիւանդներին դարման տալու համար ամէն տեսակ միջոցներ և պատրաստութիւն: Բայց մեր Միքայէլեան քաղաքային հիւանդանոցը՝ ունի՞ արդեօք գիտութիւնից խստութեամբ պահանջվող այդ բոլոր յարմարութիւնները, միջոցներն ու պատրաստութիւնները, ունի՞ արդեօք և բժիշկների բաւականաչափ կօնտինգէնտ,—չենք կարծում: Որքան լսել ենք, հիւանդանոցում մեծ նեղուածք է, բժիշկները շատ քիչ են թւով, նոյն բժիշկը, որին յանձնված է մի որ և է սովորական հիւանդութիւնների բաժինը, նա պէտք է հոգայ և հիւանդանոցը բերվող խօլէրայով հիւանդների մասին: Ի՞նչպէս կարող է նա ամէն տեղ հասնել....

Իսկ բացի Միքայէլեան հիւանդանոցից, մենք չենք լսում որ քաղաքային վարչութիւնը, կամ որ և է վարչութիւն պատրաստ ունենար ուրիշ որ և է յարմար սրահներ, խօլէրայով հիւանդներին ապաստանելու համար, չունի այնքան բժիշկներ, որոնք կարող լինէին բոլոր հիւանդների մասին հոգալու: Դեռ փառք Աստուծուն որ խօլէրան շատ թոյլ է մեզանում: Բայց ի՞նչ կը լինէր, եթէ նա սաստկանար.... Որտեղ են նիւթական միջոցներ, ո՞րտեղ են խօլէրային ապաստարաններ, բարակներ, ո՞րտեղ է բժիշկների անհրաժեշտ պերսոնալը, կամ վերջապէս ո՞ւր է քաղաքային Միքայէլեան հիւանդանոցում բաւականաչափ տեղ, բոլոր հիւանդներին ընդունելու համար, եթէ հիւանդութիւնը սաստկանայ....

Ուրեմն ի՞նչ պիտի անէին մեր քաղաքի վարիչները, կամ մեր նահանգական վարչութիւնը, կասեն մեզ:

Մեր քաղաքային հիւանդանոցը չունի բաւականաչափ տեղ, որ ապաստանի բոլոր հիւանդներին, եթէ խօլէրան սաստկանայ, նա չունի և բժիշկների բաւականաչափ կօնտինգէնտ, որ կարողանայ ճշմարիտ հոգալ բոլոր ընդունված հիւանդների մասին, ուրիշ կողմից մեր յաժերից վեր է և մենք անընդունակ էլ ենք եւրոպական ձևով քաղաքի բոլոր մասերում անմիջապէս նոր ժամանակաւոր հիւանդանոցներ, խօլէրային սրահներ, ապաստարաններ և բարակներ կանգնեցնելու (և այդ բոլորը դոյութիւն կունենայ միմիայն թղթի վրա),—իսկ աւելի լաւ է նշանակել բաւականաչափ բժիշկներ և պարտաւորեցնել նրանց տնից տուն մանգալ, անխտիր օգնութիւն հասցնել չքաւոր հիւանդներին, նոյն իսկ իրանց բնակարաններում և դրա համար հարկաւոր է բաժանել Թիֆլիսի պէս հարիւր հազար բնակիչ ունեցող քաղաքը ոչ թէ 10 հատ սանիտարական մասերի վրա և բաւականաչ 10 հոգի սանիտարական բժիշկներով, այլ բաժանել ամբողջ քաղաքը փոքրիկ բաժանմունքների վրա և աւելի շատ բժիշկներ նշանակել ամսական աւելի փոքր ռոճիկով, (եթէ միջոցները չեն ներում) և յանձնել իւրաքանչիւր բժիշկին քաղաքի այնպիսի բաժանմունք, որ իր ոյժերից վեր չը լինէր հոգ տանել իրան յանձնած քաղաքային բաժանմունքի վրա:

Աւելի լաւ է, մեր կարծիքով, անել այն ինչ որ հնարաւոր է, բայց մի և նոյն ժամանակ ոյժ ունենալ գործնականութեան մէջ իրագործել իր ծրագիրը, քան թէ ուզենալով նմանվել եւրոպական մեծ և բարեկարգ քաղաքների այդ տեսակ դիպուածներում արած կարգադրութիւններին, երազել անհնարինը կատարելու,—և մի և նոյն ժամանակ չը կարողանալ իրագործել իր մտադրված չափից դուրս ընդարձակ պլանները....

Երբ Նորերումս Խարկով քաղաքում տիրում էր սարսափելի տիֆ հիւանդութիւնը, քաղաքային վարչութիւնը բաժանեց ամբողջ քաղաքը փոքրիկ շրջանների վրա և իւրաքանչիւր շրջանում նշանակեց բժիշկներ, որոնք պարտաւոր էին այցելել հիւանդներին իրանց տներում և ձրիապէս օգնութիւն հասցնել նրանց:

Ո՞վ է ասում, շատ լաւ բան է ամէն տեսակ վարակիչ հիւանդութիւններ ունեցողներին առանձնացնել առողջներից,—բայց մենք գիտենք թէ ի՞նչ տեսակ բարակներ, ժամանակաւոր ապաստարաններ կամ վրաններ կը կառուցանի մեր քաղաքային վարչութիւնը,—նման այն ապաստարանի, որը Նորերումս կառուցված էր Ռուսաստանից եկած սովեալների համար.... Ապաստարաններ, որտեղ ամէն կողմից կը փչի, որտեղ նեխված օդ կը լինի, որտեղ հիւանդներ անխնամ մին միւսի վրա ածված կը լինեն, որտեղ չի լինի ոչինչ յարմարութիւն, ոչինչ պատրաստութիւն, որտեղ չի կատարվի ոչինչ դեզինֆէկցիա, և որոնք,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԻՃԱԿԸ

—

Մեր ծխական ուսումնարանների ուսուցիչների հասարակական և նիւթական դրութիւնը շատ անմխիթար է: Այնքան անապահով է նա նիւթապէս և այնքան կախված նրա վիճակը ուրիշների կամայականութիւնից, որ նա դառնում է մի խեղճ, ճնշված արհեստաւոր:

Մեր ծխական ուսումնարաններում 1 ուսուցանողի տարեկան ռոճիկը միջին թւով է 306 ր.: Այս միջին թւից շատ են տարբերվում դոյութիւն ունեցող maximum minimum-ները: Կայ ծխական ուսումնարան, ուր աւագ ուսուցիչը 10 դասի համար ստանում է 2,000 ր., բնակարան և վառելիք (Թիֆլիսի Յովհաննեան օր. ուս.), բայց կան աւագ ուսուցիչներ էլ, որոնք 22 դասի համար ստանում են միայն 400 ր., ուսուցիչներ, որոնք 27 դասի համար տարեկան ստանում են 120 ր. (Աստապատ), 70 դասի (?!) համար 200 ր. (Զահուկ), և այլն:

Ցանկանալով կանոնաւորել ծխական ուսուցիչների ռոճկի բաշխումը, Էջմիածնի Ուսումնարանական խորհուրդը 1890—91 ուսումնարանական տարվայ համար հրատարակեց յայտնի «Կոպարները»: Այս վերջինները թէև մտցնում են յայտնի միաձևութիւն, բայց մի և նոյն ժամանակ հիմնված են այնպիսի սկզբունքների և հաշիւների վրա, որ հակառակ են ոչ միայն մանկավարժութեան, այլ մի քանի կէտերում՝ նոյն իսկ առողջ մտքի:

Վերոյիշեալ կանոններով մեր ծխական ուսումարանները բաժանվում են երկու կարգի՝ I կոպարով և II կոպարով վարձատրող ուսումնարաններ: Բացի այդ, դասաւանդվող առարկաները ըստ վարձատրութեան չափի բաժանվում են նոյնպէս երկու կարգի. բարձր վարձատրութիւն տրվում է՝ կրօնի, հայոց, ռուսաց լեզուների և ձեռագործութեան դասերի համար, իսկ ստոր վարձ՝ թւաբանութեան, բնագիտութեան, գծագրութեան և երգեցողութեան համար: Այնպէս որ, I կոպարի ուսումնարանում կրօնի, լեզուների և ձեռագործութեան շաբաթական 1 դասը գնահատվում է տարեկան 20 ռուբլիով, իսկ թւաբանութեան, բնագիտութեան, գծագրութեան և երգեցողութեան 1 դասը՝ 15 ռուբլիով: II կոպարի ուսումնարաններում՝ կրօնի, լեզուների և ձեռագործի շաբաթական 1 դասի համար տարեկան 15 ռուբ., իսկ թւաբանութեան, բնագիտութեան և այլն՝ 10 ռուբլի:

Այս որոշ չափերից դուրս դալ ցանկացող ուսումնարանների առաջ դրված են այնպիսի խոչնդոտներ, որ շատ քչերը ցանկութիւն կունենան այդ անել. նրանք պէտք է առանձին կոպարի նախահաշիւ կազմեն, յականէ յանուանէ որոշելով այն անձերին, որոնց կամենում են պաշտօնի հրաւիրել, քանակը այն թոշակների որ կը կամենան սահմանել իւրաքանչիւր ժամի համար, պահպանելով վերոյիշեալ խորութիւնը առարկաների վարձատրութեան մէջ. օր թւաբանութեան ուսուցիչը, եթէ նոյն իսկ համալսարանական լինի, նրա դասական վարձը աւելի պակաս պէտք է լինի, քան կրօնի ու լեզուների ուսուցիչների վարձը, որքան և սոցա ցենզը ստոր լինի: Այս նոր նախահաշիւը պէտք է առաջարկվի առաջնորդին, որը իր կողմից ուղարկում է Էջմիածնի Ուսումնական խորհրդին, ուր կարող է և մերժվել: Առանց դժուարացնող ձևականութիւնների էլ այնքան քիչ է զարգացած մեր հասարակութեան մէջ ուսուցչի աշխատանքը լաւ գնահատելու գիտակցութիւնը որ, եթէ չը լինէին էլ այդ ձևականութիւնները, մեր ուսումնարանների վարչութիւնները այնու ամենայնիւ կոգտվէին կոպարների տրամադրութիւնից՝ պակասացնել ռոճիկները. իսկ այժմ նոյն իսկ ուչքի առաջ ունենալով վերև բերած խոչնդոտները՝ աւելի հանդիստ սրտով այդ կանեն:

«Կոպարներ» մտցնելով, մեր ուսումնարանների բարեկարգիչները կարծել են, թէ դրանով վերջ կը տրվի ուսուցիչների և ուսուցչուհիների ընդհանուր ձգտումին պաշտօնակատարութեան այնպիսի տեղեր գտնալ, ուր կարող են իրանց ցանկացած ռոճիկը ստանալ, և դրանից առաջացող ուսուցիչների յաճախակի տեղափոխութիւններին, որ ուսման կանոնաւոր ընթացքի խանգարման գլխաւոր պատճառն է:

Բայց տեսնենք՝ որքան առաջարկած միջոցներով վերացնվում են «յաճախակի տեղափոխութիւնները»: Նախ՝ ուսուցիչների տեղափոխութիւնների պատճառը միայն ռոճիկների տարբերութիւնը չէ, այլ մեծ մասամբ այն, որ մեր դպրոցներում ուսուցչին հեռացնելուց հետ բան չը կայ. բուսական է թեմական տեսչի (առաջնորդի), աւագ ուսուցչի կամ հոգաբարձութեան վճիռը: Երկրորդ՝ բնական է մարդկանց ձգտումը դիմել այնտեղ, ուր աւելի ապահովված է նրանց դրութիւնը: Իսկ ռոճկի խորութիւնը մնում է և «կոպարներով»՝ այդ պարզ է այս մի քանի օրինակներից: Վերցնենք առաջին կոպարի երկդասեան ուսումնարան. հայոց լեզուի ուսուցիչը ստանում է 30 դասի համար տարեկան 600 ռուբլի, թւաբանութեան և բնագիտութեան ուսուցիչը 22 դասի համար 330 ռուբլի, կրօնի ուսուցիչը 18 դասի համար 360 ռուբլի: Երկդասեան, բայց II կոպարի ուսումնարանում դասերի նոյն քանակութեան համար հայոց լեզուի ուսուցիչը ստանում է 450 ր., թւաբանութեան և բնագիտութեան ուսուցիչը 220 ր., կրօնուսոյցը 270 ռուբլի: Միդասեան ուսումնարանում I կոպարով հայոց լեզուի ուսուցիչը ստանում է 18 դասի համար 360 ր., թուաբանութեան ուսուցիչը 12 դասի համար 180 ր. միդասեան, բայց II կոպարով, հայոց լեզուի ուսուցիչը նոյն դասերի քանակութեան համար ստանում է 270 ռուբլի, թուաբանութեան՝ 120 ր.: Ուրեմն հայոց լեզուի ուսուցիչը կարող է ստանալ 600, 440, 360, 270 ր., նայած թէ երկդասեան I կոպարով, երկդասեան II կոպարով, միդասեան I կոպարով, միդասեան II կոպարով ուսումնարանում է ծառայում: Հասկանալի է որ «տեղափոխութեան ձգտումը» կոպարներով էլ նոյնն է մնում:

Բացի այդ, «կոպարներով» աւելանում է և մի նորութիւն, որի հետ հաշտվել դժուար է, այնքան նա անարդար է: Մենք խօսում ենք դասաւանդվող առարկաների մէջ մտցրած խորութեան մասին: Ուսուցիչը եթէ աւանդում է թուաբանութիւն և բնագիտութիւն՝ «կոպարով» նրա աշխատանքը աւելի քիչ է վարձատրվում, քան եթէ նա դաս է տալիս կրօն կամ լեզու. թուաբանութեան և բնագիտութեան ուսուցիչը 22 դասի համար ամենաբարձր վարձատրութիւն որ կարող է ստանալ՝ է 330 ր., իսկ սովորական (II կոպարով) 220 ռուբլի, մինչդեռ եթէ նա նոյնքան դաս ունենար կրօնից կամ լեզուից՝ կը ստանար 440 և 340 ր.:

Այս խորութիւնը այն հետևանքը կունենայ որ թուաբանութեան, բնագիտութեան և այլ «երկրորդական» համարված առարկաների ուսուցիչները,

վերջ ի վերջոյ իրանք կը դառնան վարակիչ հիւանդութեան ամենահաստատ բուներ, սերմարաններ և տարածողներ....

Զուսենալով եւրոպական բարեկիրթ, քաղաքակիրթ երկիրների ոչ շնորհը, ոչ ընդունակութիւնները, ոչ նիւթական միջոցները, ոչ կարգադրիչ ոգին, ոչ պաշտօնավարութեան մէջ ճշդութիւնն ու բարեխղճութիւնը, ոչ էլ նրանց մէջ տիրապետող օրինակելի դիսցիպլինան,—չը պէտք է յանդգնենք իրագործել այնպիսի ընդարձակ պլաններ, որոնք մեր ոյժերից վեր են։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՕԼԷՐԱՅԻ ՄԱՍԻՆ

—

Թիֆլիսում յունիսի 23-ին խօլէրայով հիւանդներ կային 6. ցերեկով եկան 4, դրանցից 3-ը եկւորներ են Բագուից. մեռնողներ չը կային. առողջացան 2. մնացին 8 հիւանդներ։ Յունիսի 22-ին Թիֆլիսի բանտում հիւանդացաւ երկրորդ բանտարկեալը, որը Մետեխի բանտում մեռաւ նոյն թուին։

—

Բագուի նահանգապետը հեռագրում է, որ այս յունիսի 22-ին հիւանդանոց են բերվել 31 հոգի, դրանցից եկւորները 27 են, տեղացիներ 4. մեռան 14, դրանցից եկւորներ 11, տեղացիներ 3. Առողջացան 11. մնացին 160 հիւանդներ. դրանցից եկւորներ 134. տեղացիներ 26. հիւանդանոցից դուրս մեռան 72, դրանցից եկւորներ 28, տեղացիներ 44. Բանտում հիւանդացան կրկին 3 հոգի։ Սալիանի բատալիոնի խօլէրային բաժինը մեռան յունիսի 21-ին 2 հոգի, մեռաւ 1, մնացին 7 հոգի։ Սպիտակ քաղաքում յունիսի 21-ին հիւանդացան 4 եկւորներ, առողջացան 2, մեռան 4, մնում են 7 հոգի։ Բալախանում հիւանդացան 9, մեռան 10, մնում են 9 հոգի։ Բալաջարիում մեռան 3. Ղուբայի մօտ մեռան 5 լեզգիներ։ Զիխում երեք հիւանդներ կան։

—

Ելիսաւետպոլի նահանգապետը հեռագրում է, որ յունիսի 22-ին Շուշու քաղաքային հիւանդանոցը մեռան 1, մնում են 6 հոգի. քաղաքում հիւանդացաւ և մեռաւ 1, մնում են 9 հոգի. Շուշու գաւառի Մակալկէնկ գիւղում հիւանդացան երկու եղբայրներ, դրանցից մէկը Բագուից էր եկել, երկուսն էլ մեռան։ Զէվանշիրեան գաւառում յունիսի 22-ին թողված են Եվլախում երկու հիւանդներ Բագուից եկող գնացքում. Կարալօսֆիլ գիւղում մեռաւ 1 հոգի, Ալպաուտամ հիւանդացան երկու, մեռաւ 1 հոգի. Ստարի-Կուդլիարում հիւանդացան 21 և մեռաւ 1 հոգի։ Կիլկ-Բայ-Ալամէդլիում հիւանդացան 2, Շիկվարլիում 1. Ելիսաւետպոլ քաղաքում յունիսի 21-ին հիւանդացաւ 1 հոգի. որը եկել էր Եվլախից, և որը հետևեալ օրը մեռաւ։ Մի և նոյն օրը հիւանդացաւ և մեռաւ քաղաքացի մի կին։ Հաջիքէնդում յունիսի 22-ին հիւանդացաւ Բագուից եկած մի հիւան, որը զետեղված է կիբիտկայում մի առանձնացած տեղում։ Նահանգում խօլէրայով հիւանդներ կան՝ Շուշու քաղաքում 15 հոգի, գաւառում 2. Զէվանշիրեան գաւառում կան 7 հիւանդներ. Ելիսաւետպոլ քաղաքում—1, գաւառում—1, ընդամենը 26.

—

Բագուի նահանգապետը հեռագրում է, որ յունիսի 23-ին խօլէրային հիւանդանոցները կրկին մտան 33, դրանցից եկւորները 26 են, տեղացիներ 7. հիւանդների ընդհանուր թիւից մեռան 17, եկւորներ 15, տեղացիներ 2. առողջացան 10, մնում են հիւանդանոցում 166, դրանցից եկւորներ 136 են, տեղացիներ 30. հիւանդանոցից դուրս մեռան 73, տեղացիներ 50, եկւորներ 23. Սպիտակ քաղաքում նորից հիւանդացան 3 եկւորներ, առողջացան 3, հիւանդ մնում են 7. Բալախանա-Սաբունչեան ամբարանոցում կրկին հիւանդացան 8, հիւանդների ընդհանուր թիւից մեռան 7, առողջացան 2, մնում են հիւանդներ 8. Սալիանի պահեստի բատալիոնի հիւանդանոցը կրկին մտան 11 հիւանդներ, մեռան 2, առողջացաւ 1, մնում են 156 հիւանդներ։ Բագուի բանտում կրկին հիւանդացաւ 1 հոգի։

—

Ելիսաւետպոլի նահանգական իշխանութեան տուած տեղեկութեան համեմատ յունիսի 23-ին Շուշի քաղաքի հիւանդանոցը նոր հիւանդներ չեն մտել. հիւանդանոցից դուրս հիւանդացել են 7, դրանցից առողջացան 2, մեռաւ 1. Շուշու գաւառում հիւանդացան 13, մեռան 10, որոնցից 3-ը եկած են Բագուից։ Զէվանշիրեան գաւառի Խոպաուտ գիւղում մեռաւ 2, Կուրտ-Ամանխանում 1. Կիլկ-Բաալամէտի գիւղում բոլոր հիւանդներից մեռաւ 1. Ղաղախի գաւառում № 22 գնացքից բերվեց մէկ կասկածելի հիւանդ։ Ելիսաւետպոլ քաղաքում հիւանդացան 2, նրանցից 1-ը տեղաւորված է հիւանդանոցում։ Հաջիքէնդում խօլէրայով հիւանդը մեռաւ։ Նահանգում խօլէրայով հիւանդներ կան՝ քաղաքում 19, գաւառում 5, Զէվանշիրեան գաւառում 9, Ղաղախի գաւառում 1, Ելիսաւետպոլ քաղաքում 3, ընդամենը 37 հոգի։

—

Դաղստանի շրջանի զինուորական նահանգապետի հաղորդութեան համեմատ, յունիսի 23-ին Պետրովսկի խօլէրային հիւանդանոցում մեռաւ մէկ կին, Սամուրեան և Դարգինեան շրջաններում օտարութիւնից վերադարձողներից կրկին հիւանդացան խօլերայանման նշաններով 6 հոգի, մեռան 3 հոգի։

—

Թիֆլիսում յունիսի 25-ին գիշերը խօլէրայով հիւանդներ կային 8, գիշերն եկաւ 1. յունիսի 24-ին նոր հիւանդացողներ չը կային. խօլէրայով 9 հիւանդներից մեռան 2. յունիսի 25-ին առաւօտեան ընդամենը 7 հիւանդներ կան։

ՁՐԻ ԹԷՑԱՏՆԵՐ

—

Ցօդուտ ձրի թէյատների, աղքատների համար, հանգանակութիւնը արդէն բացված է Թիֆլիսի վաճառականների շրջանում։ Սկիզբը դրված է Դվորցովայա փողոցի վաճառականների մէջ՝ նախաձեռնութեամբ պ.պ. Ց. Տէր-Սարգսեանի և Ս. Զարախչեանի։ Ինչ կասկած, որ նոյն հանգանակութիւնը տեղի կունենայ և մեր քաղաքի բոլոր մասերի վաճառականների շրջանում։ Ցեղվելով մեր հասարակութեան պատրաստականութեան վրա, յոյս ունենք, որ հէնց առաջիկայ շաբաթվանից կարելի կը լինի դէթ երկու թէյատուն բանալ, (բացի սկվերի թէյատնից, որը բացվում է ոստիկանապետ պ. Մաստիցկու նախաձեռնութեամբ) երկու ամենակարևոր տեղերում՝ մինը Սալդատսկի բազարին մօտիկ, այդտեղ խունված աղքատ ամբոխի և մշակների համար, և միւսը ներքև՝ Շաղինօվի քարվանսարայի մօտերքը։

Գործի սկիզբը և աջողութեամբ շարունակելը կախված է հասարակութեան առատաձեռնութիւնից,—որքան շատ դրամ և միջոց կը տայ ունևոր դասակարգը, այնքան էլ շատ օգնութիւն ցոյց կը տրվի աղքատներին, ուրեմն այնքան էլ աջողութեամբ կարելի կը լինի կուռել խօլէրայի տարածման դէմ։

Ուշացնելը վտանգաւոր է։ Այս օրերս, կարճատև հով եղանակներից յետոյ, կրկին սկսվեց Թիֆլիսում անտանելի շոգը։ Աղքատ դասակարգը չունենալով աւելի լաւ ըմպելիք՝ թէյ, գինի, շոգի դէմ իրան մի փոքր հովացնելու համար, պէտք է սկսի խմել Թիֆլիսի անմաքուր ջուրը, որը սարսափելի հետևանք կարող է ունենալ։

Եւ այդ պատճառով մենք մեր աղքատ ժողովուրդը փրկած կը լինենք մի մեծ վտանգից, եթէ քաղաքի մի քանի տեղերում անմիջապէս հաստատենք ձրի թէյատներ և մատակարարենք նրան թէյ, և բացի դրանից, խմելու համար եփ տուած և սառեցրած ջուր։

Թող չը մոռանան մեր քաղաքացիք Բագուի օրինակը։ Եթէ բագուցիք իրանց միլիոնների դէմ մի կէս միլիոն դնէին քաղաքի մաքրութեան և աղքատ մշակների պաշտպանութեան վրայ, այն ժամանակ Բագուն չէր հասնի այժմեան սոսկալի վիճակին, չէր ենթարկվի բարոյական և նիւթական այն անպատմելի և անկարագրելի վնասին, որը հարիւր միլիոններից էլ աւելի է։

Այժմեանից օգնենք մեր աղքատ և անօգնական հարևաններին և քաղաքացիներին, եթէ չենք ուզում, որ խօլէրան նրանց դիակների վրայից անցնելով՝ սուզի մէջ դցի ամբողջ քաղաքը։

Խ. Մ.

ԽՐԱՏՆԵՐ ԽՕԼԷՐԱՅԻ ՄԱՍԻՆ

I

Միջոցներ, որ անհրաժեշտ են ձեռնարկել մինչև խօլէրայի երևալը.

1) Ամեն մի բնակիչ պարտաւոր է հէնց իր օգտի համար նպաստել քաղաքի առողջապահական դործին, պահել իր տունը, բակը, դռները և սրահը մաքուր։

2) Աղբը և ուրիշ ամեն տեսակ անմաքրութիւնները պէտք է հաւաքել առանձին արկղների մէջ և քաղաքից դուրս տանել, իսկ աւելի անվտանգութեան համար պէտք է նախապէս նրանց վրա չը հանդցրած կիր ածել և այնպէս տանել։

3) Արտաքնոցները պէտք է մաքուր և խստակ պահվին, և ամեն օր այնտեղ պէտք է ածել անշնաս դարձնող (дезинфекцирующія) նիւթեր։

4) Կեղտոտ ջրերի, աղբակիր, աղտեղի և ամեն տեսակ անմաքրութիւնների համար շինված փոսերը պէտք է մաքուր և խստակ պահել։ Իսկ նրանց մէջ հաւաքված աղբը պէտք է քաղաքից դուրս տանել, կանխապէս դեղերով նրանց անվտանգ դարձնելով։

Ծանօթութիւն. երբ քաղաքում արդէն հիւանդութիւն կայ, կամ թէ նա շատ մօտիկ է քաղաքին, այն ժամանակ աւելի լաւ է լցված փոսերը չը մաքրել, այլ նրանց մէջ ածել անվտանգ դարձնող նիւթեր, ծածկել կիրով և փակել ամուր։

5) Քաղաքի ներքին մասերում և դեռի ափերում եղած հորերը պէտք է փակվեն, յամենայն դէպս նրանց ջուրը չէ կարելի ոչ մի կերպ գործածել, լուացքի, դեռին ջրելու, մանաւանդ խմելու համար։ Նոյնպէս պէտք է փակվեն և այն

անկարող լինելով կառավարվել կոպարներով սահմանած չնչին ռոճկով, հարկադրված պէտք է կամ ընտրեն առաջին կարգի առարկաների դասերը, կամ պէտք է բոլորովին թողնեն ուսուցչութիւնը հայոց ծխական ուսումնարաններում, որովհետև դժուար է ենթադրել որ մի ուսուցիչ թուաբանութեան դասեր յանձն առնելով, դրանով յանձն է առնում աւելի քիչ ուսել կամ Դիոգէնի պէս տակառում ապրել։ Եթէ լեզուների ուսուցիչը ստանալով տարեկան 680 կամ 450 ր. հազիւ է կարող իր գոյութիւնը պահպանել, ապա ինչ կարող են անել «երկրորդական առարկաների» ուսուցիչները 330, 220, 180 և աւելի պակաս ռոճիկներով։ Դուք երևակայեցէք դրանց դրութիւնը, եթէ դժբաղդները դեռ ընտանիքի տէր էլ են։ Իսկ ենթադրել, որ մի ուսուցիչ ունենալով շաբաթական 22 դաս կարող է և ուրիշ գործ գտնել՝ այդ ոչ հնարաւոր է, ոչ էլ ցանկալի է մանկավարժական տեսակէտից։ Միայն քահանան միջոց ունի և ուրիշ աղբիւրների վրա յոյս դնել (թաղում, ամուսնութիւն, մկրտութիւն և այլն)։ 22 դասի համար շատ շատ 330 ր., իսկ սովորական վարձ 220 ռուբլի. դա անում է ամսական 27 կամ 18 ռուբլի։ Ենթադրենք որ ուսուցիչը քաղաքում է ապրում և դուք նրա տեղումն էք. արէք ձեր հաշիները։ Այս բոլորի հետևանքն ինչ է։ Իրանց աշխատութիւնը ու ցենդը վերը ի չատէ գնահատող ուսուցիչները կը թողնեն իրանց սիրած պարապմունքները մեր ծխական ուսումնարաններում, իսկ ասպարէզը կը մնայ պակաս հմտութիւն ունեցողներին և անճարացածներին։ Բայց թէ ցանկալի է արդեօք ժողովրդի կրթութեան գործը անճարացածների ձեռքը յանձնել՝ այդ թողնում եմ դատել իրան ընթերցողին։

Գուցէ մեր բարեկարգիչները, մտցնելով այսպիսի խարութիւն, հիմնվել են այն համոզմունքի վրա որ թուաբանութիւնը, ընագիտութիւնը և գծագրութիւնը աւելորդ են տարրական ուսումնարաններում, ինչպէս համարվեց աշխարհագրութիւնը. կամ թէ այդ առարկաների դասաւանդութիւնը այնքան քիչ պատրաստութիւն է պահանջում ուսուցչի կողմից, որ ո և իցէ ցենդի կարողութիւն էլ չը կայ նրանց համար... այդ էլ կարող է պատահել մեր դարում։

Վարձի խարութիւն՝ հիմնված ուսուցիչների ցենդի տարբերութեան, կամ գիւղի և քաղաքի ապրուստի զանազանութեան վրա՝ հասկանալի է։ Եթէ ասենք՝ գիմնազիայի ուսուցիչը աւելի պէտք է ստանայ, քան գիւղական ուսումնարանի ուսուցիչը, որովհետև առաջնի համար պահանջվում է աւելի երկար տարիների աշխատութիւն և աւելի մեծ պատրաստութիւն, համալսարանական ցենդ, իսկ երկրորդի համար միայն քաղաքային ուսումնարանում աւարտելը և առաջնի կեանքի պահանջները աւելի մեծ են քան երկրորդի, ինչպէս և առհասարակ քաղաքում ապրելը աւելի դժուար է քան գիւղում՝ հասկանալի կը լինի։ Բայց դժուար է հաշվել, երբ ձեզ ասում են, թէ մի և նոյն ուսումնարանում, պարապած ժամերի մի և նոյն քանակութեան համար վարձը պէտք է տարբեր լինի՝ նայած թէ առարկան կրօն է, թէ թուաբանութիւն. և առաջնի համար, իբրև աւելի յարգվածի, աւելի մեծ վարձ պէտք է նշանակվի։ Կարծես, եթէ պետական սկզբնական ուսումնարաններում թուաբանութեան, ընագիտութեան և այլ առարկաների ուսուցիչը ստանում է մօտ 370 ր., իսկ կրօնուսոյցը միայն 76 ր., այդ այն պատճառով է, որ քիչ է յարգված այդ ուսումնարաններում կրօնը, այլ ոչ այն, որ քահանան ունի եկամուտ և իր ծուխից, թողած մի կողմը որ դուցէ աւելի քիչ աշխատանք է պահանջում այդ տեսակ առարկայի դասաւանդութիւնը։

Եթէ բացի այս բոլորից մի քիչ աւելի խոր մտածենք մեր ծխական ուսումնարանների նշանակութեան մասին, աւելի ևս ակներև կը լինի, որ ուսումնարանական գործը չէ կարելի անճարացածներին թողնել։ Այժմ քաղաքներում, օրինակ Թիֆլիս, Բագու, Երևան, Շուշի, Ղազար, Մողոկ և այլն՝ շատ ծնողներ, անդամ ունևոր, իրանց երեխաներին, մանաւանդ աղջկերանց, տալիս են ծխական ուսումնարանները, ուր նրանք իրանց մանուկ, շատ տպաւորվող հասակում ստանում են մայրենի լեզուով նախապատրաստութիւն և յետոյ աջող մանում են պետական ուսումնարանների աւելի բարձր դասարանները (2-րդ, 3-րդ)։

Մենք աւելի ենք կանգ առնում ուսուցչի նիւթական ապահովութեան վրա, որովհետև մինչև այդ չը լուծվի, միւս բոլոր պահանջները և դանդաղները անհետանք երեմիականներ կը լինեն։ Ոչինչ այնքան չէ ստորացնում, բարոյապէս չէ ճնշում մարդկանց, որչափ նրանց տնտեսական անապահով և ուրիշի քմահաճութիւնից կախված դրութիւնը։ Մինչև որ հայ ծխական ուսուցչի վարձը հաւասար կը լինի խոհարարի վարձին՝ դժուար է սպասել, որ մեր ուսուցչական դասակարդի մտաւոր բարոյական մակերևոյթը յայտնի բարձրութեան վրա մնայ և չընկնի։ Եթէ վարձատրութեան maximum-ը այնչափ է, որ միջին կրթութիւն առած մարդու ամենահամեստ պահանջներին անդամ գոհացում չէ տալիս՝ հասկանալի է, որ այն ժամանակ նրանք յանձն չեն առնի ուսուցչութիւն և նրանց տեղը կը բռնեն աւելի քիչ զարդացում և պատրաստութիւն ունեցող մարդիկ, որոնց պահանջներին գոհացում կը տայ և շատ չնչին վարձը։

Վարձ պէտք է նշանակել այնչափ, որ միջին կրթութիւն ստացած ուսուցիչը կարողանայ, թէև ամենահամեստ, բայց իր կոչման վայել կերպով ապրել։ Նայելով գիւղի և քաղաքի մէջ եղած կենսական պայմանների տարբերութեան, կարելի է ծրոշել վարձատրութեան յայտնի minimum-ներ։ Այդ կունենայ երկու նշակութիւն. նախ դրանով կը սահմանափակվի ուսուցչի աշխատանքի ծայրայեղ հարստահարութիւնը, իսկ երկրորդ՝ այդ որոշ minimum-ով կը ստեղծվի նիւթական մի դրութիւն, որ մրցում տեղի կունենայ համեմատաբար աւելի բարձր ցենդ և պատրաստութիւն ունեցողների մէջ, քան եթէ այդ minimum-ը շատ ստոր լինի։ Միւս կողմից ուսումնարանների վարչութիւններին պէտք է կատարեալ ազատութիւն տալ այդ որոշ չափից աւելի վարձ նշանակել, եթէ նրանց ուսումնարանի միջոցները ներում են։ Արդարև, ինչու, եթէ ուսումնարանը միջոց ունի աւելի լաւ պատրաստված ոյժեր հրաւիրել, որոնք աւելի բարձր են գնահատում իրանց աշխատանքը՝ չը թոյլ տալ նրան այդ անել։ Ծխական ուսումնարաններում ուսուցչական ցենդի minimum-ը կարելի է ընդունել թեմական դպրոցից, ուսուցչական սեմինարիայից, ուսուցչական ինստիտուտից և և էջմիածնի ճեմարանից աւարտման վկայականներ, բայց այդ դեռ չը պէտք է նշանակել, որ այն ուսումնարանները, որոնք միջոց ունեն, չը պէտք է աւելի բարձր ցենդ ունեցողներին հրաւիրեն։

Լ. Սարգսեան

հողերը, որոնք փորված են արտաքնոցների և աղբի փոսերի մօտ։

6) Եթէ հիւանդութիւն եղած տեղում աղբիւրային ջուր չը կայ, այն ժամանակ հորի կամ գետի ջուրը ուրիշ կերպ չէ կարելի գործածել եթէ ոչ անպատճառ եռացրած։

Ծանօթութիւն. միշտ պէտք է զգոյշ լինել և կեղտոտ առուների մօտից ջուր չը վերցնել։

7) Զորս-հինգ օր շարունակ պէտք է շատ զգոյշ յարաբերութիւն ունենալ վարակված տեղերից եկողների հետ։

(Կը շարունակվի)

ՆԵՐԿԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍԻ ֆրանսիական հիւպատոս պ. Դը-Լաշօմ հրաժարական տուած լինելով իր պաշտօնից, մեր քաղաքի ֆրանսիական հիւպատոս նշանակված է պ. Օզէպի (Auzepy), որը և հաստատված է Թագաւոր Կայսրից իր պաշտօնում։

—

«Новое Время» լրագիրը հաղորդում է որ ներկայ թուի աշնան բացվելու է Պետերբուրգի Վասիլիեվսկի Օստրով անունով քաղաքամասում առաջին մանուար արհեստագործական դպրոց խուլ ու մունջների համար։

—

Շամախու գաւառապետը հետևեալ հեռագիրն է ուղարկել «Каспій» լրագրի խմբագրութեանը. «Խնդրեմ տպել հասարակութեանը զգուշացնելու համար, որ Շամախում արդէն ազատ բնակարաններ չը կան. եկողները մնում են փողոցներում անպատսպան և ստիպված են լինում յետ դառնալ։»

—

Յունիսի 21-ին, Բաքուի պօլիցիմէյստերի հրամանով, որպէս հաղորդում է «Каспій» լրագիրը, փակվել են չորս տրակտիրներ, որովհետև նրանց մէջ խօլերայով հիւանդանալու մի քանի դէպքեր են եղել։ Բոլոր բնակարանները խիստ դեզինֆեկցիայի են ենթարկված։

—

Յունիսի 21-ին երկաթուղիական № 22 դնացքով, Բաքուից ճանապարհ են ընկել դէպի Թիֆլիս մեծ բազմութիւն բանտարկեալների, որոնք թողել են գործատները և գործարանները։

—

«Каспій» լրագրի յունիսի 23-ի համարը կէս թերթ է դուրս եկել, ինչպէս երևում է գրաշարների պակասութեան պատճառով, որովհետև նոյն համարում վերոյիշեալ խմբագրութիւնը յայտարարութիւն է տպել թէ հարկաւոր են գրաշարներ «Каспій» լրագրի տպարանի համար։

—

Յունիսի 24-ին, չորեքշաբթի, անդրկովկասեան երկաթուղու դնացքով Թիֆլիսից ճանապարհ ընկաւ Բաքու Կովկասեան կառավարչապետը, ուղեկցութեամբ դիւանատան դիրեկտոր Շատիլովի, իր երկու ադիւտանտների և բժշկի։ Կառավարչապետը մի քանի օր կը մնայ Բաքուում։

—

«Нов. Время» լրագիրը հաղորդում է, որ ֆինանսների մինիստրութեանը առաջարկված է մի նոր ակցիզներական ընկերութեան կանոնադրութեան նախագիծը՝ Անդրկովկասում և Կրիմում չերտասպահութիւնը զարգացնելու համար։

—

Յունիսի սկզբներին եղած սաստիկ չոքերից յետոյ, յանկարծ եղանակը փոխվեց և սկսեց վերջերս մինչև անգամ ցուրտ անել, իսկ այժմ նորից սկսվեցան չոքերը։

—

«Нов. Обозрѣніе» լրագիրը հաղորդում է, որ անդրկովկասեան երկաթուղու ծառայողները իրանց մէջ ստորագրութիւն են բացել թէյատներ հիմնելու Թիֆլիսի հասարակ ժողովրդի համար էպիդէմիայի ժամանակ։

—

Կովկասեան հանքային ջրերով բժշկվելու համար մինչև յունիսի 14-ը, «Терск. Вѣд.» լրագրի խօսքերով, եկել են 2,995 մարդիկ։

—

ԿՕԶՕՐՈՒՄՆ էլ, ինչպէս մեզ գրում են, կազմակերպվել է մի սանիտարական յանձնաժողով, խօլերայի տարածման հնարաւորութեանն առաջն առնելու համար։ Բայց, ինչպէս մեզ գրում են, այդ սանիտարական յանձնաժողովի անդամները այցելում են մեծ մասամբ մասնաւոր ամարանոցները և դատարկ քաներին են նկատում, այն ինչ ուշադրութիւն չեն դարձնում կօշօրի գլխաւոր փողոցի վրա, որը ծածկած է թէ ձիերի և թէ կովերի աղբով և այդ աղբի վրա խանութատէրերը ջուր են սրսկում, իբր թէ ջրում են փողոցները, ուշադրութիւն չեն դարձնում առանի մէջ գոյութիւն ունեցող երկու երեք հիւրանոցների վրա, որոնք լի են կենդանիներով և որոնց արտաքնոցները շատ անմաքուր դրութեան մէջ են։ Նոյնպէս շատ անմաքուր են պահվում այդ հիւրանոցների խոհանոցները. Առանի գլխաւոր փողոցի վրա, որի երկու կողմը խանութներ են շինված, բաւական զգալի դարշահոտութիւն է տիրում։

—

Մինչդեռ բժիշկների խորհրդով Թիֆլիսում նորից թոյլ է տրված լաւ և հասած մրգերի ծախելը, բացի թութից, սեխից և սոր տեսակի ծիրանից,—ուրիշ քաղաքներում, ինչպէս Շուշում, միանգամայն արգելել են մրգերի վաճառելը։

—

«Бессарабскій Вѣстникъ» լրագիրը գրում է որ այն ժամանակից, երբ հարաւային Ռուսաստանի շատ տեղերից հրէաները դաղթեցին, նրանց տեղը գրաւեցին մօլդավացի գաղթականներ։ Սակայն սրանք ոչ թէ միայն հրէաներից լաւ չեն, բայց իրանց ընտանութեամբ, իրանց բարք ու վարքերով նոյն իսկ ստոր են հրէաներից։ Թէ ժողովուրդը և թէ կալուածատէրերը աւելի էլ դժգոհ են մօլդավացիներից, քան թէ հրէաներից։ Մօլդավացին աւելի էլ խորամանկ և խաբեբայ է, քան թէ հրէան, բացի սրանից մօլդավացիների ընտանութիւնը անտանելի է. նրանք կուարար են այն աստիճան, որ անընդհատաբար կռիւներ են սարքում թէ իրար մէջ և թէ հարևան ժողովրդի հետ և կռիւն սկսելուն պէս՝ անմիջապէս դանակ են վերցնում, վիրաւորում և նոյն իսկ սպանում են մարդկանց։ Բեսարաբիայի բուն ռուս բնակիչներից շատերը այժմ ցաւում են որ հրէաները հեռացան երկրից։

—

«Մշակի» ներկայ համարից սկսած տպագրում ենք «Խրատներ խօլերայի մասին», որ յօրինած է Թիֆլիսի քաղաքապետի յանձնարարութեամբ 3-դ բաժնի սանիտարական բժիշկ Վ. Մ. Արծրունին և վաւերացված է քաղաքային վարչութեան նիստում յունիսի 20-ին 1892 թ-ի, ներկայութեամբ Ս. Ս. Խատիսանովի և Կ. Ն. Ստեփանեան բժիշկների։

—

Բաքուի քաղաքի երեք հաշտարար դատարաններում ևս, որպէս հաղորդում է «Каспій» լրագիրը, թէպէտ և ամեն օր գործեր են նշանակվում քննութեան համար, բայց մեծ մասամբ, գանգատուողների և վկաների չը գալու պատճառով, գործերը յետաձգվում են։ Դատարանի ծառայողներն ասում են, որ դատարան կանչված անձինք հեռացել են քաղաքից։

—

Նոյն լրագիրն ասում է, թէ բացի խօլերայից, Բաքուին մի ուրիշ անախորժութիւն է սպասում, այն է, որ քաղաքը կարող է մնալ առանց կենսական անհրաժեշտ մթերքների։

—

Ի նկատի ունենալով Թիֆլիսում խօլերայի տարածվելը և այն վտանգը, որ կարող է առաջ գալ եի չը տուած ջուր խմելուց, Թիֆլիսի պ. ոստիկանապետը հրամայեց պօլիցիական բոլոր պրիստաւներին՝ պարտաւորեցնել բոլոր հիւրանոցատէրերին, դրօսարան-այգիներ և բուֆէտներ պահողներին, որ դրանք պահեն եի տուած և սառեցրած ջուր խմելու համար, իսկ սառուցը պէտք է լինի մաքուր և արուեստական—Վեցէլի գործարանից։

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ երէկ, յունիսի 25-ին, Թիֆլիսի պօլիցիմէյստերի մօտ կանչված էին պրիստաւները և ոստիկանները՝ բաժանելու նրանց քաղաքային վարչութեան ուղարկած դեղերը խօլերայով հիւանդներին սկզբնական օգնութիւն հասցնելու համար։ Այդ դեղերը դետեղված են առանձին քսակներում, և այդ քսակները ոստիկանները պէտք է կախեն իրանց ուսից։

—

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են, որ յունիսի 23-ին Թիֆլիսով անցան 108 հոգի բանտարներ և վարպետներ Բաքուի նաւթագործարաններից։ Հետևեալ օրը, հինգշաբթի, Թիֆլիսով անցան դէպի Բաթում Բաքուի բանտարներ, թիւով 66 հոգի, իրանց կանանցով և երեխանցով։

—

Թիֆլիսի պ. նահանգապետը յայտնում է ընդհանուր գիտութեան, որ Թիֆլիսում ասիական խօլերա տարածված լինելու պատճառով, ձմերուկի և սեխի վաճառումը անպայման արգելվում է։

—

Յօգուստ Թիֆլիսում բացվելի ձրի թէյատների՝ պ.պ. Յովհաննէս Տէր-Սարգսեանի և Ստանիսլաւ Զարախչեանովի նախաձեռնութեամբ Թիֆլիսի Դվօրցօվայա փողոցի վաճառականների մէջ մի օրում հանգանակվեց 281 ր, 20 կոպէկ. «Մշակի» խմբագրութիւնը ստանալով այդ փողը, այսօր, յունիսի 27-ին, յանձնեց Թիֆլիսի պ. քաղաքագլխին։

—

Մեզ ուղարկված է Բաքուից յօգուստ յունվարի 6-ի աղետից վնասվածների՝ Սուքիասեանից 50 կ. և Ակօրենկօից 2 ռուբլի։

—

Անհասկանալի պատճառով, Թիֆլիսի Մուշաւիրկա կոչված այգիում այժմ շատ քիչ է երաժշտութիւն լինում,—հապա շաբաթը երկու անգամ։ Միթէ մի տեղ չը պէտք է լինի, ուր մեր սրտնեղած հասարակութիւնը մի փոքր զուարճութիւն զգայ։

—

Տրապիզօնից ստացած տեղեկութիւններին նայելով, «Մշակի» մուտքը այդ քաղաքում այժմ այլ ևս չէ արգելվում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՈՒՆԱՅ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ԲԱՑՈՒՄԸ

—

Ինչպէս հաղորդում է «Revue d'Orient» լրագիրը, այս օրերս կայացաւ յունայ պարլամենտի բացումը։ Նախագահում էր Վօլօի պատգամաւոր Կանտարջիս, որպէս պատգամաւորներից ամենաաւագը։ Նա ծնվել է 1817 թ-ին։ Մինիստրների նստարանների վրա նստած էին նոր մինիստրները, առաջին մինիստր Տրիկուպիսի հետ միասին։

Տրիկուպիս ունի մեծ ժողովրդականութիւն և երբ նա մտնում է դահլիճը, գրեթէ բոլոր պատգամաւորները ոտի են կանգնում ու բարևում են նրան, իսկ բացման նիստի փակվելուց յետոյ, «կեցցէ Թագաւորը» կանչելուց յետոյ՝ կանչում են «կեցցէ Տրիկուպիս»։ Այդ կեցցէները ընդունվում են բուռն ծափահարութիւններով և դահլիճում ներկայ գտնված հասարակութեան կողմից։

Նիստի բացումից առաջ եկեղեցական պատգամաւորները աղօթքներ են կարդում, ապա պատգամաւորները երդվում են հաւատարմութիւն Թագաւորին և սահմանադրութեանը։ Քրիստոնեայ յոյն պատգամաւորները երդվում են աւետարանի վրա, իսկ մահմեդական պատգամաւորները զուրանի վրա։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունիսի։ Սարատովում յունիսի 22-ին և 23-ին հիւանդացան խօլերայով էլի 29, մեռան 2. Յարիցինում հիւանդացան 15, մեռան 6. միւս նահանգները լաւ են. Բաքուում յունիսի 21-ին և 22-ին հիւանդանոց մտան 77, մեռան 27, առողջացան 18. մնում են 160. հիւանդանոցից դուրս մեռան 162։ Կովկասի միւս անբարեյաջող տեղերում հիւանդութեան և մահվան դէպքերը բազմաթիւ չեն։

ՊԱՐԻԶ, 25 յունիսի։ Լրագիրներում խօսում են, որ եկող ամեն պիտի կայանայ մի մեծ ֆրանս-ռուսական հանդէս՝ Տիվերեան այգիում։

ՎԻԵՆՆԱ, 25 յունիսի։ Ուղղարական առևտրի մինիստրը հրամայեց եօթ օրվայ քննութեան ենթարկել այն ապրանքները, որոնք բերվում են Սև և Ազովեան ծովերի նաւահանգիստներից։

ՍՕՖԻԱ, 25 յունիսի։ Բելչեվի սպանութեան գործի քննութեանը մեղադրվողները իրանց յանցաւոր չեն համարում. Լէպօվցեվ հաստատում է, որ Բելչեվին սպանել են Տիւֆեակչիեվ և Կազարօվ. Կարավելով ցուցմունք է տալիս, որ դաւադրութեան մասին ինքը ոչինչ չը գիտէր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունիսի։ Այսօր, Սկոբելևի մահվան տասնամեակի օրը, Կազանեան տաճարում, Սլավեանական ընկերութեան կարգադրութեամբ, կատարվեց հանդիսաւոր հոգեհանդիստ, որին ներկայ էին զինուորական մինիստրը, շատ բարձրաստիճան անձինք, գլխաւորապէս զինուորականներ, Սկոբելևի նախկին մի քանի ստորադրեալները և մեծ բազմութիւն ժողովրդեան։—«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ ծովային մինիստրութեան կառավարիչը մանրամասնօրէն քննեց Կասպից ծովի նաւատորմը և նաւահանգիստները, նոյնպէս և Բաքուն. նոյնը կը կատարվի և Սև ծովի նաւահանգիստների վերաբերմամբ։ Ամեն տեղ, որտեղով պիտի անցնի ծովապետ Չիխաչով, միջոցներ են ձեռք առնվում խօլերայի առաջն առնելու համար։—«Правит. Вѣстникъ» յայտարարում է, որ Նիժեգօրոդեան տօնավաճառը կը բացվի սովորական միջոցներ, յուլիսի 15-ից։ — Որովհետև Աստրախանում սկսված են բացարձակ անկարգութիւններ այն պատճառով, որ նահանգական վարչութիւնն առողջապահական միջոցներ է ձեռք առել խօլերայի դէմ կուելու և նրա տարածման առաջն առնելու համար,—ուստի Աստրախան քաղաքը և Աստրախանի գաւառը յայտարարված են խիստ հսկման դրութեան ներքոյ։—Սարատովում, յունիսի 23-ին հիւանդանոց տարան 20 հոգի. մեռան 8. մնում են 43. յունիսի 24-ին Սիմբիրսկ, «Միսիսիպի» նաւով բերված են 2 հիւանդ Բաքուից. յունիսի 21-ի համար տեղեկութիւններ չեն հաղորդված Թիֆլիսում. յունիսի 22-ի գիշերը հիւանդանոցում կային 6. բերվեց 1. մեռաւ 1. հիւանդութեան դէպքեր եղան և Կովկասի մի քանի ուրիշ տեղերում։ Գանձակի նահանգում կան 20 հիւանդներ. յունիսի 16—20 Զիղակում, Սամարկանդում, Տաշկէնտում, և Խօջենտում հիւանդանոցներ բերվեցան սակաւաթիւ հիւանդներ և մահվան դէպքերը շատ չէին. Թուրքեստանի տեղացիներից մեռնողներ շատ եղան՝ Զիղակում 70, վոլոստներում—Ուզբեկում՝ 120, Զաշմաաբի՝ 80, Բավատի՝ 200. Պարսկական Էնզելի նաւահանգստում յունիսի 20-ին խօլերա երևաց. մեռան 15։—Երէկ փակվեց հրդեհաշէջների ժողովը։

ՊԱՐԻԶ, 25 յունիսի։ Պօրտսմուտից հեռագրում են, որ գնդապետ Դոզդս երէկ ռմբակոծեց դօկանէյցիների գիւղերը, որոնք մասնակցել էին Գամ գիւղի վրա եղած յարձակմանը. մինչև օգնութեան հասնելը, անհնարին է ցամաքի վրա շարունակել պատերազմական գործողութիւնները։

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Ճանապարհորդական դնացքներ Թիֆլիսի և Բաթումի մէջ.

№ 1

ԲԱԹՈՒՄԻՑ մեկնում է . . . . 9 ժ. 45 ր. առաւ.
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . . 9 » 52 » երեկ.

№ 2

ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . . 9 ժ. 30 ր. առաւ.
ԲԱԹՈՒՄ հասնում է . . . . 9 » 45 » երեկ.

Պօստային դնացքներ Բաթումի և Բաքուի մէջ.

№ 3

ԲԱԹՈՒՄԻՑ մեկնում է . . . . 11 ժ. 25 ր. երեկ.
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . . 12 » 25 » ցերեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . . 1 » 20 » ցերեկ.
ԲԱՔՈՒ հասնում է . . . . . 7 » 30 » առաւ.

№ 4

ԲԱՔՈՒԻՑ մեկնում է . . . . 11 ժ. 10 ր. գիշեր
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . 5 » 50 » երեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . 6 » 50 » երեկ.
ԲԱԹՈՒՄ հասնում է . . . . 8 » 15 » առաւ.

Խառն դնացքներ Թիֆլիսի և Գանձակի մէջ

ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . 9 ժ. 20 ր. երեկ.
ԳԱՆՁԱԿ հասնում է . . . . 10 » 10 » առաւ.
ԳԱՆՁԱԿԻՑ մեկնում է . . . 7 » 35 » երեկ.
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . 7 » 30 » առաւ.

—

ՌՈՒՍԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈՒԵՆԱՒԻՐ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 4 ժամին երեկոյեան, շրջական ըէյսով, Բաթումից դէպի Օդէսա.

ՇԱԲԱԹ, 8 ժամին երեկոյեան նամապէս։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 7 ժամին երեկոյեան, Բաթումից դէպի Կ. Պոլիս։

Խմբագիր-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Հ. Յ. ՕՐԲԷԼԻ

Սօլօլակակայա փողոց, սեփական տանը №№ 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 12 ժամից մինչև 2 ժ. և երեկոյեան 5 ժամից մինչև 7 ժ.
Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ։

(№ 145) 65—150

ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ

Թիֆլիս, Սօլօլակակայա փողոց, տուն Աղաբաբովի, Ամառնային գործնական հիւսուածքներ, ձեռքի պատրաստութեան՝ տիկինների զգեստների, մանուկների զգեստների և պարոնների շապիկների համար։
Մեծ ընտրութիւն լայն սարպինկաների՝ նախշով։
Սարպինկայի գուլպաների թել, սադա, գոյնզգոյն։ Ներկերը տևողական են։
Սարպինկայի զգեստներ արկղներում 3 ռուբլուց սկսած մինչև 60 կոպէկ։
Սարպինկայի իւբկաներ 1 ռ. 80 կ. և աւելի թանգ։
Սարպինկայի քթի աղլուխներ և գլխի թաշկինակներ։

ՖԱԲՐԻԿԱՆՏՆԵՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԲԷՆԴԷՐ ԵՒ ՍՏԵՊԱՆՕՎ

(№ 47) 21—30

ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ոյժի հաստնելը տարածութեան վրա.

ՏԵԼԵՖՕՆՆԵՐԻ ՍԱՐՔԵԼԸ.

Էլէկտրական նշաններ.

ԶԱՆԳԱԿՆԵՐ

ԳԱԼՎԱՆՕՊԼԱՍՏԻԿԱ.

Էլէկտրոլիզ,

Ակումուլատորներ, Էլէմենտներ,

ՇԱՆԹԱՐԳԵԼՆԵՐ.

Նախահաշիւներ և ծրագիրներ ձրիաբար.

(91—№ 5)

ԷԼԷԿՏՐՕՆ

ԳԼԷԲՕՎ եղբայրների

ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա)

Մեծ Սադովայա փողոց, 24

РОСТОВЪ (на Дону)

БР. ГЛѢБОБЫ

Большая Садовая, 24.

ԳԱԶԱՅԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ

Ցատոս սիստեմայի, որոնք իրանք իրանց են ուղղում ու օծում։

Գազի համար — ածուխից,
— — — նաւթից,
— — — անտրացիտից,
— — — կէրոսինից

1/2-ից մինչև 120 ձիու ոյժ։

Շոգեմեքենաներ մեծ արագութեան.

73—100 (Ե. չ.)

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА

HOTEL NIEMIECKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ“ գտնվում է **ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ**, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նոմէրներ, որոնց սալք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման։ Նոմէրների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով։ Հիւրանոցում կայ ընթերցարան-զրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագիրները, հիւրերի համար անվարձ։ Կայ ըէստորան, տելեֆոն, քաղցրեղէնների խանութ, բաղնիքներ։

Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում։

(№ 21) 27—130 (2.)

Ներկայ տարվայ օդոստոսի մէկից ԹԻՖԼԻՍՈՒՄ ՆԻԿՕԼԱՅԵՎՍԿԻ ուսումնարանի համար հարկաւոր է 9—12 սենեակներից բաղկացած տուն, որոնցից չորս սենեակը պէտք է լինեն մեծ, իսկ մնացածները բնակութեան սենեակների սովորական մեծութիւնով։

Յանկացողները կարող են ուղարկել իրանց յայտարարութիւնները ՆԻԿՕԼԱՅԵՎՍԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ Պ. ՔԱԹԱՆԵԱՆՑԻՆ, ՈՐ ԲՆԱԿՎՈՒՄ Է ՕԲՇՉԵՍՏՎԷՆՆԻ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ, ԱԲԷՍՕԼՕՄՕՎԻ ՏԱՆԸ, № 14.

(№ 70) 2—2

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ ԵՎ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ դեղերի, մորթին դեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է կուկիայում, վօրոնցովի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ։

(№ 67) 5—100 (Ե. չ.)

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՕՖԷՍԻՕՆԱԼ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԱՍԵՐ.

1) Հանդերձների և սպիտակեղէնի ձևի դասեր Գլօդզինսկու մեթոդով և Շեղղերի ֆրանսիական մեթոդով։
2) Կարի դասեր մօդային ժուրնալներով։
3) Հարթակարի և զանազան ձեռագործերի դասեր։
4) Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու համար։

Վճարը ամսական 2 ռուբլի. երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկոյեան։

Տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը ձրի։

(№ 23) 33—40

ԱՍՖԱԼՏԻ ԻՐԵՂԷՆՆԵՐ ԵՒ ԱՍՖԱԼՏԻ ՈՒ ԳՈՒՏՐՕՆԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Սիզրանի ասֆալտի գործարանի բարձրագոյն հաստատված ընկերութեան ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԲԱԹՈՒՄՈՒՄ։ Յանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով.
ԹԻՖԼԻՍ. Ալէքսանդրեան փողոց, № 50, Ի. Մ. Զերնեաեվին։
ԲԱԹՈՒՄ. Սադովայա փողոց, № 3, պ. Սուխանովին։

№ 24 15—15

ԷՎԷԼԻՆԱ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ վէպ (հոգեբանական էտիւդ).
Գինը 50 կոպէկ (պօստի ծախսով)

Ծախվում է. „Մշակի“ խմբագրատանը, կենտրոնական և Խիդէկելի գրավաճառանոցներում և Միքայէլեան կամուրջի վրա գտնվող Յովհաննէսովի գրավաճառանոցում.

(№ 126) 5—20



ՄԻԱՅՈՅ **ԽԱՐԲՈՒԽԻ** ԴԷՄ

բժշկական դեպարտամէնտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

Ծախվում է 40 կոպէկով

Դեղագոլ ծական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլիսում։

№ 12 37—40

ՀԱՇՎԵՏՎՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ

31-ն Յունիսի 1892

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիսում	Բաղուի և Բաթումի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ)	157,173—30	84,752—88	241,926—18
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	767,500 —	241,000 —	1,008,500 —
3. Աւանդներ բանկներում	400,000 —	— —	400,000 —
4. Զեղչ. (Disconto) մուրհ. երկու ստորագրութ.	2,615,255—67	1,076,223—75	3,691,479—42
5. Զեղչ. մուրհ. ապահ. տոկոսաբեր թղթերով.	40,000 —	— —	40,000 —
6. Զեղչումն տոկոսաբեր թղթ., կտրօն. և այլն.	24,002—62	2,888—88	26,891—50
7. Փոխառութիւն դրամականով՝			
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	885,731—05	506,820 —	1,392,551—05
բ) » ոչ ապահ. » »	189,270 —	12,795 —	202,065 —
գ) ապրանքների	— —	77,040 —	77,040 —
դ) Ոսկւոյ և արծաթի	— —	21,342 -09	21,342—09
8. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	1,082,945—73	66,285—79	1,149,231—52
9. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր.	106,303—13	1,054—55	107,358—68
10. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	5,705,009—30	— —	5,705,009—30
բ) Բանկի հաշիւը (Nostro)	5,970,303—19	— —	5,970,303—19
11. Բաժինների հաշիւը կենտր. վարչութեան հետ	377,501—45	— —	377,501—45
Կենտրօն. վարչութեան հաշիւը բաժինների հետ	— —	502,381—88	502,381—88
12. Գնումն և վաճառ. արժեթղ. ըստ յանձնարա.	53,259—37	— —	53,259—37
13. Պայմանա. անցուցուած փոխառութիւններ.	10,320 —	12,400 —	22,720 —
14. Բողոքուած մուրհակներ	1,259—05	— —	1,259—05
15. Ընթացիկ ծախսեր	25,240—90	13,165—52	38,406—42
16. Կահկարասիք և սկզբնական ծախսեր	3,756—75	3,025—91	6,782—66
17. Ցետ ստացուելիք ծախսեր	12,306—68	2,266—90	14,573—58
Ր. Ա.	18,427,138—19	2,623,444—15	21,050,582—34

ՊԱՐՏՔ	Թիֆլիսում	Բաղուի և Բաթումի բաժն.	Ընդամենը
1. Հիմնական դրամագլուխ	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Պահեստի դրամագլուխ	202,510—72	— —	202,510—72
3. Դրամական աւանդներ՝			
ա) Պայմանաժամով	2,933,443 —	601,024 —	3,534,467 —
բ) ց'Պահանջ	288,088 —	70,380 —	358,468 —
գ) Ընթացիկ հաշուով հասարակ	1,449,832—28	1,316,500—55	2,766,332—83
դ) » » պայմանաւոր	— —	127,521—26	127,521—26
4. Փոխառումն պետ. բանկայի Թիֆլ. բաժն. ապահովված զեղչեալ մուրհակներով	— —	— —	— —
5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետ. բանկի Թիֆլ. բաժն. ապահով. տոկոս. թղթերով	— —	— —	— —
6. Թղթակիցներ՝	— —	— —	— —
ա) Նոցա հաշիւը (Loro)	5,833,401—52	— —	5,833,401—52
բ) Բանկի հաշիւը (Nostro)	6,064,415—67	— —	6,064,415—67
7. Բաժինների հաշիւը կենտ. վարչութ. հետ.	— —	382,842—06	382,842—06
Կենտրօն. վարչութ. հաշիւը բաժին. հետ.	395,381—52	— —	395,381—52
8. Բանկի բաժնետոմսերու անվճար կտրօնների բաշխը	16,090—60	— —	16,090—60
9. Զը վճարուած տոկոսներ, աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողութեանց	90,336—31	26,292—46	116,628—77
10. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	108,357—35	66,154—86	174,512—21
11. Փոխանցիկ գումարներ	45,281—22	32,728—96	78,010—18
12. Բողոքված մուրհակները	— —	— —	— —
13. Արդիւնք 1891 թ.	— —	— —	— —
Ր. Ա.	18,427,138—19	2,623,444—15	21,050,582—34

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Іюня 1892 г.

Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.